ԵՄ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍ-ԱՖՐԻԿՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ*

ՀՏԴ 32 (44+6)

ԺԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ, ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
jane.harutyunyan@gmail.com

Հոդվածի հիմնական նպատակն է պարզաբանել ԵՄ ազդեցությամբ Ֆրանսիայի արտաքին քաղաքականության փոփոխման միտումները հատկապես աֆրիկյան երկրների նկատմամբ և՛ քաղաքական, և՛ տնտեսական հարթություններում: Այդ նպատակով խնդիր է դրվել ուսումնասիրել Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը աֆրիկյան երկրներում ԵՄ ստեղծումից առաջ ու դրանից հետո: Պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ ուսումնասիրել ենք Ֆրանսիայի քաղաքականությունը և վուգահեռ վերլուծությունների հիման վրա պարզել վերջինիս ծավալման ընթացքն ու արմատական փոփոխությունների դրդապատճառները: Արդյունքում՝ Ֆրանսիայի քաղաքականությունը աֆրիկյան երկրներում ռեալիստականից դարձավ ավելի լիբերալիստական ու հռետորական, միակողմ քաղաքականությունից անցում կատարվեց բազմակողմ քաղաքականության, մշակվեց նոր անվտանգության քաղաքականություն, տնտեսական հարաբերությունների հիմքում դրվեց տնտեսական համագործակցության սկզբունքը:

Հետազոտությունը հնարավորություն է տալիս վեր հանել Աֆրիկայում Ֆրանսիայի քաղաքականության հեռահար նպատակները, այն է՝ ԵՄ սկզբունքները խաղաբարտ դարձնելով՝ պահպանել միջազգային հեղինակությունն ու ազդեցությունը: Սակայն նոր քաղաքական մոտեցումների մեջ դեռ նկատելի են նախկին «սովորությունները»: Խոսելով Ֆրանս-աֆրիկյան հարաբերությունների վրա ԵՄ ազդեցության մասին՝ երկու տեսակետ կարելի է առանձնացնել: Առաջինն այն է, որ Ֆրանսիան իրեն բավականին հեռացրել է Աֆրիկյան պետությունների քաղաքական, տնտեսական ու դիվանագիտական կյանքից, իսկ երկրորդն՝ այն, որ իրականում պահպանված է ստատուս քվոն և Ֆրանսիան դեռ շարունակում է գերիշխող դիրքում մնալ Աֆրիկայում, և Ֆրանսիայի՝ Աֆրիկայից «հեռանալը» բացատրվում է ԵՄ գործոնով, ինչը ստիպեց Ֆրանսիային ամբողջովին փոխել իր անվտանգության քաղաքականությունն Աֆրիկայում:

Բանալի բառեր՝ *ԵՄ, ֆրանս-աֆրիկյան քաղաքական հարաբերություններ, ֆրանս-աֆրիկյան տնտեսական հարաբերություններ, բազմակողմ քաղաքականություն, անվտանգության քաղաքականություն, ռեալիստական քաղաքականություն, միգրացիոն քաղաքականություն, ֆինանսական աջակցության քաղաքականություն:*

1990-ական թթ.-ին աշխարհում տեղի ունեցած փոփոխությունները, մասնավորապես Սառը պատերազմի ավարտը, ԽՍՀՄ փլուզումը, ԱՄՆ դերի բարձրացումը և, վերջապես, ԵՄ ստեղծումը մեծապես փոխեցին ուժերի

* Հոդվածը ներկայացվել է 08.05.2019թ., գրախոսվել՝ 17.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

հավասարակշռությունն աշխարհում: Այդ ամենի հետևանքները նշմարելի են նաև Ֆրանսիայի՝ աֆրիկյան քաղաքականությունում:

Մաաստրիխտի պայմանագիրը ստորագրվեց 1992 թ.-ի փետրվարի 7-ին և ուժի մեջ մտավ 1993թվականին, որով Եվրոպական տնտեսական համայնքը վերանվանվեց ԵՄ-ի, և ներկայացրեց Ընդհանուր արտաքին ու անվտանգության քաղաքականությունը: Սակայն այդ փոփոխությունները չէին վկայում ԵՄ-ում արտաքին քաղաքականության ոլորտում կոնսենսուսի առկայության մասին, քանզի ԵՄ անդամ պետությունների քաղաքական կուրսերը կարող էին և տարբեր լինել: Միևնույն ժամանակ ԵՄ անդամների համար գրեթե անհնարին էր ունենալ արտաքին քաղաքական մեկ ընդհանուր կուրս: Սակայն Ֆրանսիան փորձում էր հասնել դրան՝ միևնույն ժամանակ ամրապնդելով իր դիրքերը Եվրոպական համայնքում: Լինելով եվրոպական միասնության ջատագով՝ Ֆրանսիան պաշտպանելու էր իր տեղն ու ազգային շահերը ԵՄ կառույցների մեջ[150]:

Ֆրանսիայի առաջնորդները ԵՄ ստեղծումից հետո սկսեցին իրենց քաղաքական կուրսը հարմարեցնել ԵՄ նպատակներին ու շահերին՝ փորձելով մեծապես ներգրավվել ԵՄ քաղաքականության մեջ, քանզի մտածում էին, որ այն դիվիդենտներ կտա Ֆրանսիային արտաքին քաղաքականության ոլորտում: ԵՄ գործընկերները մեծ ազդեցություն ունեին Ֆրանսիայի քաղաքականության վրա և հակառակը: Եթե մինչ ԵՄ ստեղծումը Ֆրանսիայի քաղաքականությունը ավելի ռեալիստական էր, ապա ԵՄ ստեղծումից հետո այն դարձավ լիբերալիստական ու հռետորական: Այդ ամենը պարզ երևում է Աֆրիկայում Ֆրանսիայի վարած քաղաքականության օրինակում, քանզի նախկինում վարելով ռեալիստական քաղաքականություն՝ Ֆրանսիան այն համապատասխանեցնում էր իր շահերին: Բացի այդ, Աֆրիկայում ժողովրդավարական շարժում էր տարածվել, ինչը սպառնալիք էր Ֆրանսիայի տնտեսական, քաղաքական շահերին, միևնույն ժամանակ ԱՄՆ-ն ուժեղացրել էր իր դիրքերն Աֆրիկայում, ինչն էլ Ֆրանսիան դիտեց որպես սպառնալիք, և նրան մնում էր փոխել իր քաղաքականությունը Աֆրիկայում ԱՄՆ-ին հակակշռելու համար, սակայն այն ԵՄ շահերի հետ համատեղելը հեշտ չէր[151]: Ֆրանս-աֆրիկյան հարաբերությունները կառուցվածքային առումով չփոխվեցին, բայց բազմաթիվ նոր սկզբունքներ ընկան դրա հիմքում, ինչում էլ մեծապես կարևորվում է ԵՄ դերը: ԵՄ շահերից ելնելով՝ Ֆրանսիան իր քաղաքականության մեջ մտցրեց այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝ խաղաղություն, անվտանգություն, կայունություն, ժողովրդավարություն, օրենքի գերակայություն: Այդ սկզբունքները կարևորվեցին նաև ֆրանս- աֆրիկյան գագաթնաժողովի ժամանակ, երբ Ֆրանսիան ընդունեց Լա Բոլ (La Baule) դոկտրինը[152], ինչը պաշտպանեց Աֆրիկայում լիբերալիստական ու դեմոկրատական կարգերի հաստատումը: Դոկտրինի համաձայն՝ Ֆրանսիան կրճատելու էր իր ներկայությունն Աֆրիկայում և' տնտեսական և' քաղաքական ոլորտներում:

---

[150] **Սարյան Ս.,** Նախագահական ընտրությունները Ֆրանսիայում, 2007թ. *http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=801*.

[151] **Olsen, G. R**. 'Challenges to the Traditional Policy Options, Opportunities for New Choices: The *African Policy of the EU, The Round Table, 375, July 2004, p.425-436.*

[152] Ֆրանսիական Բոլ քաղաքում 1990թ. հունիսի 20-ին Ֆրանսուա Միտտերանի ելույթը հայտնի է որպես Լա Բոլ դոկտրին: Ներկա էին աֆրիկյան 37 պետությունների առաջնորդներ: «Չկա զարգացում առանց ժողովրդավարության և չկա ժողովրդավարություն առանց զարգացման...», «...Ֆրանսիան չի պարտադրի Սահմանադրանան օրենքի մոդել, այլ Աֆրիկայի ժողովուրդն ինքը կընտրի իր կառավարման ուղին՝ հիմնված համընդհանուր արժեքների վրա, այն է՝ ժողովրդավարություն»: Այդուհետ Ֆրանսիան շարունակեց ղեկավարել աֆրիկյան պետություններում ժողովրդավարական գործընթացները (Cf. Politiqueétrangère de la Fra*nce, Nov-Dec 1991, p.48):*

Այնուամենայնիվ, այն ենթատեքստում պաշտպանում էր ավտորիտար վարչակարգը[153]:

ԵՄ ձևավորումից հետո ստեղծված քաղաքական իրադրությունը Ֆրանսիային տարավ դեպի բազմակողմ քաղաքականության, մանավանդ որ միակողմ քաղաքականությունն արդեն հասցրել էր նվազեցնել Ֆրանսիայի հեղինակությունն Աֆրիկայում: Բազմակողմ քաղաքականությունը Ֆրանսիայի համար էական հնարավորություններ էր ստեղծում[154]: Ֆրանսիան չդադարեց Աֆրիկայում ներխուժումներ իրականացնել, ինչն իր պատճառներն ուներ. նախ՝ տնտեսական, քաղաքական, մշակութային հետաքրքրությունն էր Աֆրիկայի նկատմամբ, ապա՝ Ֆրանսիան այնտեղ ուներ ստրատեգիական կենտրոններ, և խորն էին Ֆրանսիայի ու Աֆրիկայի առաջնորդների կապերը: Ֆրանսիան այս կերպ իր ռազմական ներխուժումներն Աֆրիկա ներկայացնում էր միջազգային կազմակերպությունների քողի ներքո: ԵՄ-ն իր քաղաքականության հիմքում դրել էր ահաբեկրության դեմ պայքարը և Ֆրանսիան՝ այն դարձնելով խաղաքարտ և, որպես անվտանգության երաշխավոր, փորձում էր միջամտել Աֆրիկյան իր նախկին գաղութների գործերին՝ այդպիսով իրականացնելով իր նպատակները. 1. միջազգային ասպարեզում պահել իր երբեմնի բարձր դիրքը, որը խարխլվեց, երբ դադարեց լինել մեծ գաղութատեր պետություն, 2. պահպանել իր ստրատեգիական ռեսուրսները, 3. պահպանել իր հսկայական շահույթները, որոնք ստանում էր իր մենաշնորհային կարգավիճակից[155]:

ԵՄ ստեղծումից հետո Ֆրանսիան պարտավորվեց մշակել Նոր անվտանգության քաղաքականություն, որն իրենից ներկայացնում էր Աֆրիկայում ռազմական ներկայության կրճատում (1997-2002թթ.-ին ֆրանսիական զորքի թիվը 8.000-ից դարձավ 5.600՝ տեղակայված լինելով հինգ կենտրոններում՝ Աբուջան, Դաքար, Ջիբութի, Լիբրևիլ և Նջամենա)[156]: Ֆրանսիայի ռազմական ներկայության կրճատումը հանգեցրեց տնտեսական և ֆինանսական աջակցության կրճատման (1995թ.ին՝ 42.1 բիլիոն, 1998թ.-ին՝ 34.7 բիլիոն)[157], հետևաբար կարելի է ենթադրել, որ Ֆրանսիան ցանկանում էր ամրապնդել Աֆրիկայի անվտանգության համակարգը միջազգային կազմակերպությունների, մասնավորապես ԵՄ միջոցով[158]:

Ֆրանս–աֆրիկյան քաղաքական հարաբերությունների փոփոխության հարցում չի կարելի անտեսել նաև Ֆրանսիայի նկատմամբ աֆրիկյան առաջնորդների վերաբերմունքի փոփոխության գործոնը, որոնք սկսեցին բողոքել Աֆրիկայում Ֆրանսիայի ներկայությունից (մասնավորապես Ուգանդայի ու Ռուանդայի առաջնորդները. «Մենք չենք ուզում, որ Աֆրիկայի ժողովրդավարությունը պայմանավորված լինի քաղաքական ու տնտեսական շահերով: Մենք ուզում ենք, որ

---

[153] **Martin, G**., 2000. France's African Policy in Transition: Disengagement and Redeployment. *Illinois: University of Illinois, p. 13.*

[154] **Chasles, J.M**., 2011. Nicolas Sarkozy's African Policy in the Context of Franco-*Chadian Relations. DynamiquesInternationales, Vol. 4., pg. 4.*

[155] *The European Union Foreign Policy towards Africa, Rhetoric and Reality: Mozambique, a Case* Study, Name: Paulo MateusAntónioWacheDate: *23 August 2010 pg 22.*

[156] **Jean-Dominique Geslin**, "Quels gendarmes pour l'Afrique?" JeuneAfrique (15-*21 June 1999), pp. 27-8, which notes that the Zambakro training center is financed by France to the tune of 15 million francs.*

[157] *French National Assembly, Adevah-Poeuf Report, 1998, pp. 9, 23; P. Marchesin,* "L'aidepublique au développement en 1997," Observatoire permanent de la coopérationfrançaise, Rapport *1997 (Paris: Karthala, 1997), p. 17.*

[158] *France Diplomatie, 2010. Africa-France Summit, Final Declaration, 1 June 2010. Available from: http://www.diplomatie.gouv.fr/en/IMG/pdf/2010_Africa-France_ Summit_Final_Declaration-2.pdf (Accessed 30 May 2013).*

Աֆրիկայի ժողովրդավարական ձգտումներն ընկած լինեն ֆրանս-աֆրիկյան և եվրո-աֆրիկյան հարաբերությունների հիմքում»[159]:

ԵՄ ազդեցությունը չշրջանցեց նաև Ֆրանս-աֆրիկյան տնտեսական հարաբերությունները, քանզի ԵՄ ստեղծումից հետո արդեն Ֆրանսիան իր քաղաքականության հիմքում դրեց ԵՄ տնտեսական համագործակցության սկզբունքը՝ անդրադարձ կատարելով միգրացիոն քաղաքականությանը և ֆինանսական աջակցության քաղաքականությանը: Տնտեսական ոլորտում ԵՄ ընդհանուր քաղաքականության գաղափարը կարծես նշմարելի էր, քանզի գործում էր Եվրոպական զարգացման հիմնադրամ, որում կենտրոնանում էր եվրոպական երկրների նախկին գաղութներում մեկ ընդհանուր տնտեսական քաղաքականության արդյունքը:[160] Այսպիսով՝ տնտեսական ոլորտն այն միակն էր, որի շուրջ ԵՄ պետությունները ընդհանուր համաձայնության էին եկել: Այդ ամենն անդրադարձավ նաև Ֆրանս-աֆրիկյան հարաբերություններին: Աֆրիկայում անկում ապրեց ավտորիտար ռեժիմը, ինչն էլ ստիպեց Ֆրանսիային փոխել իր քաղաքական կուրսը[161]:

1990-ական թթ.-ից հետո Ֆրանսիայի համար տնտեսական քաղաքականությունը Աֆրիկայում առաջնակարգ դիրքեր մղվեց: 1986-1988թթ.-ին և 1993-1995թթ.-ին Ֆրանսիան գործի դրեց միգրացիոն քաղաքականությունը՝ կիզակետում պահելով Ֆրանկոֆոն Աֆրիկան: Այս դեպքում ևս մեծապես նկատելի էր ԵՄ ազդեցությունը Ֆրանսիայի քաղաքականության վրա: Միգրացիայի ոլորտում ձևավորվել էին մի շարք դրդապատճառներ, որոնք ԵՄ-ին մղեցին քայլեր ձեռնարկելու միգրացիայի ոլորտում երրորդ երկրների հետ համագործակցությունն ավելի խորացնելու ուղղությամբ: Այն գաղափարը, թե միգրացիոն հոսքերը դեպի ԵՄ և դրա սահմաններից դուրս չեն կարող դադարեցվել, ԵՄ-ին ստիպեցին գործել և կոնկրետ, տարաբնույթ գործողություններ առաջարկել, որոնց նպատակն էր ապահովել, որ միգրացիան հնարավորինս ծառայի՝ ի շահ բոլոր շահագրգիռ պետությունների[162]: Միանգամից նկատվեց դեպի Ֆրանսիա մուտքի արտոնագրերի տրամադրման կրճատում, բազմապատկվեցին արտոնագրերի տրամադրման վարչական խոչընդոտները, տեղի ունեցավ չարթերային չվերթների պարտադրված չեղարկում[163]: ԵՄ միգրացիոն քաղաքականությունը ստիպեց Ֆրանսիային 1990-ական թթ. անօրինական ներգաղթյալների նկատմամբ կիրառել սահմանային վերահսկողություն: Սակայն Ֆրանսիայի այդ քաղաքականությունը մեծապես վնասեց ֆրանս-աֆրիկյան հարաբերությունները: Իրավիճակից դուրս գալու համար Ֆրանսիան որդեգրեց աֆրիկյան պետություններին ֆինանսական աջակցության քաղաքականություն (aid policy), որպեսզի վերականգնի իր տնտեսական ազդեցությունը տարածաշրջանում[164]: Եթե մինչ 1989թ. Ֆրանսիայի վարած աջակցության քաղաքականությունը կախվածության մեջ էր դնում Աֆրիկային, ապա 1990-ական թվականների աջակցության քաղաքականությունն իրենից ներկայացնում էր տնտեսական հիմք Աֆրիկայի համար: Աֆրիկյան պետությունների հետ պայմանագրերը, որոնց համաձայն Ֆրանսիան ֆինանսական աջակցություն էր ցուցաբերում վերջիններիս, հնարավորություն էին տալիս մոտ լինել աֆրիկյան ուրանին, նավթին ու բնական

[159] Politiqueétrangère de la France, MayAugust 1996, p.89.

[160] *Article 98 of the Cotonou Convention.*

[161] **Martin, G**., 2000. France's African Policy in Transition: Disengagement and Redeployment. *Illinois: University of Illinois, p. 7.*

[162] **Վերխեր Է.,** «ԵՄ հետ միգրացիայի ոլորտում համագործակցության ընդլայնման և խորացման հնարավորությունները», 2012թ. հուլիս:

[163] Mentioned in Philippe Marchesin, "La politiqueafricaine de la France en transition," *Politiqueafricaine no. 71 (October 1998), p. 93.*

[164] **Conte, B**., 1997. France's African Aid Policy: The End of an Era? Review of African Political *Economy, Vol. 24, No. 71, pg. 141.*

գազին[165]: Աֆրիկյան երկրներին ֆինանսական աջակցության գլխավոր պայմանն այդ երկրների ժողովրդավար լինելն էր: Այդ ամենը փաստաթղթային հիմքով ամրապնդվեց Տոգոյի մայրաքաղաք Լոմեում 1985, 1990,1995 թթ.-ին և Բենինի մեծ քաղաքներից մեկում՝ Կոտոնուում[166]: Մինչ ԵՄ ստեղծումը Աֆրիկյան, Կարիբյան և Խաղաղօվկիանոսյան պետությունների հետ բանակցությունները վարվում էին համաձայն հենց այդ կոնվենցիաների: Աֆրիկյան պետությունների հետ կնքված այդ կոնվենցիաների էությունն այն էր, որ ոչ ժողովրդավար պետությունները տնտեսական աջակցություն չէին ստանում ԵՄ-ից: Սակայն այդ ֆինանսական աջակցությունն էլ Ֆրանսիան օգտագործում էր որպես քաղաքական ազդեցության գործիք՝ ստիպելով Աֆրիկյան պետություններին այն ծախսել Ֆրանսիական ապրանքների վրա: Ֆրանսիան նաև աջակցություն էր ցուցաբերում աֆրիկյան պետություններին ժողովրդավարության և մարդու իրավունքների բնագավառներում:

Այսպիսով՝ եթե մինչ 1990թ.-ը Ֆրանսիան տնտեսական կապեր էր հաստատում իր նախկին գաղութների հետ, ապա 1990թ.-ից հետո ընդարձակեց այն՝ կապեր հաստատելով շուրջ 114 պետությունների հետ: Այդ քաղաքականության ընդարձակման մեջ մեծ էր ԵՄ դերը, և Ֆրանսիան, հավատարիմ մնալով ԵՄ սկզբունքներին, փորձում էր ամրապնդել իր միջազգային հեղինակությունը[167]:

EU IMPACT ON FRANCE-AFRICAN POLITICAL AND ECONOMIC RELATIONS

ZHANNA HARUTYUNYAN
Yerevan State University, PhD Student of International Relations and Diplomacy Chair, Yerevan, Republic of Armenia

The aim of the article is to ilucidate the trends of the French foreign policy changes in relation to African countries both in political and economic spheres under the impact of EU. For this aim we have explored the French foreign policy in African countries before and after the EU creation. The application of historical-comparative method based on parallel analysis gave us an opportunity to examine the process of French policy expansion and the motives of its radical changes. The policy of France shifted from realistic to more liberal and rhetorical, unilateral policy transferred to multilateral policy, a new security policy was developed towards Africa. Economic relations acquired a new quality, economic policy being based on the principle of economic cooperation. The study shows that France wanted to achieve its long-term goals to maintain international reputation and influence in Africa by implementing the principles of EU. But there are former "habits" in the new policy. Speaking about the EU impact on French-*African policy we may distinguish two views: first - France has dropped out of the African political, economic and diplomatic life; second - the status quo is still preserved and France still remains dominant in Africa. EU forced France to completely change its security policy in Africa.*

Key words: *EU, France-African political relations, France-African economic relations, multilateral policy, security policy, realistic policy, migration policy, financial add policy.*

[165] *The European Union Foreign Policy towards Africa,Rhetoric and Reality: Mozambique, a Case* Study, Name: Paulo MateusAntónioWacheDate: *23 August 2010 pg. 22.*

[166] *Articles 1, 8, and 9.2 of the Cotonou Convention.*

[167] *Agirici*-Survie, Jacques Chirac et la Françafrique. Retour à la case Foccart? [Dossiers noirs de la *politiqueafricaine de la France* no. 6] (Paris: L'Harmattan, 1995), pp. 108, 111.

ВЛИЯНИЕ ЕС НАФРАНКО-АФРИКАНСКИЕ ПОЛИТИЧЕСКИЕ И ЭКОНОМИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ

ЖАННА АРУТЮНЯН
аспирант кафедры международных отношений и дипломатии Ереванского государственного университета, г.Ереван, Республика Армения

Целью статьи является выяснение тенденций изменения французской внешней политики в отношении африканских стран как в политической, так и в экономической сферах под воздействием ЕС. Для этой цели мы изучили французскую внешнюю политику в африканских странах до и после создания ЕС. Применение историко-сравнительного метода, основанного на параллельном анализе, дало нам возможность изучить процесс расширения французской политики и мотивы ее радикальных изменений. Политика Франции перешла от реалистичной к более либеральной и риторической, односторонняя политика перешла к многосторонней политике, была разработана новая политика безопасности в отношении Африки. Экономические отношения приобрели новое качество, экономическая политика основана на принципе экономического сотрудничества. Исследование показывает, что Франция хотела достичь своих долгосрочных целей по поддержанию международной репутации и влияния в Африке путем реализации принципов ЕС. Но в новой политике есть прежние «привычки». Говоря о влиянии ЕС на французско-африканскую политику, мы можем выделить две точки зрения: первая – Франция выбыла из африканской политической, экономической и дипломатической жизни; вторая – статус-кво все еще сохраняется, а Франция по-прежнему остается доминирующей в Африке. ЕС заставил Францию полностью изменить свою политику безопасности в Африке.

Ключевые слова: *ЕС, франко-африканские политические отношения, франко-африканские экономические отношения, многосторонняя политика, политика безопасности, реалистичная политика, миграционная политика, финансовая политика.*